

Ինքնորոշման իրավունքը ճանաչող  
ևս մեկ բանաձև

Եվրոպական խորհրդարանի լիազուգու միստր ծայների ճնշող  
մեծամասնությամբ ընդունել է նույնիսկ վերջին Բրյուսելում կա-  
յանալիք Արևելյան գործընկերության գազաթնաժողովին ընդառաջ  
բանաձև, որտեղ արդեն երկրորդ անգամ ճանաչել է Արցախի ժո-  
ղովրդի ինքնորոշման իրավունքը՝ փաստորեն կրկնելով 2017-ի  
հուլիսի 5-ի ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 72-րդ նստաշրջանի կա-  
պակցությամբ ընդունված  
նախադեպը: Սա մեծ  
կարևորության բանաձև է,  
քանի որ Արևելյան գործըն-  
կերության բրյուսելյան գա-  
զաթնաժողովին ընդառաջ  
այն սահմանում է համագոր-  
ծակցության ակնկալիքները,  
ուրվագծում գործընկերու-  
թյան հետագա զարգացման  
տրամաբանությունը:



N 43 (691)  
17-23.11 2017  
ISSN 1829-149X  
17 0 4 3 >  
9 771829 149003

# 911



ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄԻՆԻՍՏԵՐՍՏՎՈ ՍԵՐՎԻՍԻ  
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

# Արտակարգ թերթ

Միջազգային կաղեր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՕՐԵՐ

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Կրեմլի պա-  
լատում հանդիպում է ունեցել ՌԴ նախագահ  
Վլադիմիր Պուտինի հետ: Քննարկվել են հայ-  
ռուսական հարաբերությունների օրակարգը և  
միջպետական կապերի ամրապնդմանն ու զար-  
գացմանը վերաբերող հարցեր: Նախագահներն  
անդրադարձել են ձեռք բերված պայմանավոր-  
վածությունների իրականացման ընթացքին,  
Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման

գործընթացին: Նախագահներն այցելել են նաև  
Տրետյակովյան պատկերասրահի մասնակցելու  
Ռուսաստանում «Հայաստանի մշակույթի օրե-  
րի» պաշտոնական բացման հանդիսությանը,  
որը մեկնարկել է Մարտիրոս Սարյանի գեղան-  
կարների ցուցահանդեսով: «Սա հրաշալի հնա-  
րավորություն է առավել մոտիկից ծանոթանա-  
լու միմյանց, բացահայտելու մեր երկրների  
պատմությունը, մեր ժողովրդի մշակույթի ան-

հայտ էջերը: Այս մեծ նախագիծը խթան կհանդի-  
սանա երկրորդ հարաբերությունների և դրանց  
հետագա փոխհարստացման համար», - իր  
ելույթում նշել է Սերժ Սարգսյանը: Միջոցառումն  
հանդնակում է մեր երկրների միջև դիվանագի-  
տական հարաբերությունների հաստատման 25  
և «Բարեկամության, համագործակցության ու  
փոխադարձ օգնության մասին» պայմանագրի  
ստորագրման 20-ամյակներին: ■



Կարևոր

### ՂԱՇԱՅԻՆ ԽՈՂԱՆՈՑԻ ՄՐՑՈՒՅԹ



էջ 4

### ՔԱՐԱԹԱՓՍԱՆ ԿՏԱՆԳ ԶԿԱ



էջ 4

### ԿԱՍՆ ՓԱՐԻԳՅԱՆ ՀԱՍՏԱՉԱՅՆԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱԳՄԱՆ



էջ 5

### ՉՍՈՒՆՆ ԸՆԴԱՌԱԳ



էջ 7

Հարցազրույց

## ՂԱԿԻԹ ՏՈՆՈՅԱՆ. ՂԵՏՔ Է ՄԵԿ ԹԻՄԻ ՂԵՍ ԱՇԽԱՏԵՆՔ

«911.Արտակարգ թերթը» և  
«ԱՆՂԻՆ» գրական-  
գեղարվեստական հանդեսը  
Ներկայացնում են հարցազրույց  
ՀՀ ԱԻ նախարար  
Ղալիթ Տոնոյանի հետ:  
Զրույցը վարել է մեր թերթի  
լրագրող Դուսիկ Արամ:  
«ԱՆՂԻՆ»-ի առաջիկա  
համարում հրատարակվելու է  
հարցազրույցի ամբողջական  
ամսագրային տարբերակը:  
- Արդեն բավական ժամանակ է՝  
Դուք ղեկավարում եք արտակարգ  
իրավիճակների նախարարությու-  
նը: Երկրի պաշտպանության գերա-  
տեսչությունից տեղափոխվեցիք  
մեկ այլ ուժային կառույց, որը գե-  
րազանցապես զբաղվում է քաղա-  
քացիական պաշտպանությամբ:  
Անսովոր չէ՞ր կտրուկ անցումը...  
Որո՞նք են այդ համակարգերի նմա-  
նություններն ու տարբերություննե-  
րը: Ի՞նչ փոխվեց Ձեր կյանքում:

- Արտակարգ իրավիճակների  
համակարգին ծանոթանալու հա-  
մար բավարար ժամանակ ունե-  
ցել են ու դեռևս պաշտպանու-  
թյան նախարարի տեղակալ  
եղած ժամանակ հաճախ առնչվել  
են ԱԻ համակարգի գործառույթ-  
ներին՝ համակարգելով ՊՆ-ԱԻՆ  
փոխգործակցության տարբեր  
ուղիքներ:  
- Ի դեպ՝ Ձեր սկսած կառուց-  
վածքային բարեփոխումների դր-  
դասատմանը հիմն է նաև այն, որ  
որոշ ստորաբաժանումներ ոչ մի-  
այն կրկնում են միմյանց գործա-  
ռույթները, այլև՝ գործունեություն  
ծավալում չհամաձայնեցված ձև-  
ով: Բնականաբար, նշված և այլ  
ստորաբաժանումները ենթակա  
են հրատապ բարեփոխումների,  
ի՞նչն ընդհանուր բարեփոխումնե-  
րի մեկնարկ կարելի է համարել:  
- Բոլոր ուղիքներում էլ կան և՛

բանիմաց ու նվիրյալ, և՛ թույլ  
պատրաստված կադրեր: Կադրե-  
րի հետ աշխատանքի նպատակա-  
յին ուղին համակարգի առաջան-  
ցիկ բարեփոխումներն են, ինչը և՛  
ժամանակի մարտահրավերներով  
է պայմանավորված, և՛ ՀՀ կառա-  
վարության հրատապ խնդիրների  
մաս է:  
Կարծում են մեր ուժեղ կողմե-  
րից է ժողովրդի շրջանում  
ձևավորված բարձր վստահությու-  
նը: Մարդիկ այլևս հավատում են  
մեզ, հավատում օգնության 911  
հեռախոսահամարին, որը հավա-  
քում են ամենատարբեր արտա-  
կարգ իրավիճակների ու խնդիր-  
ների դեպքում: Ընդ որում՝ այդ  
զանգերից և ոչ մեկն անպատաս-  
խան չի մնում ու չի մնալու: Ճիշտ  
հակառակը՝ 911 արտակարգ հա-  
մարին զուգահեռ կներդրվի Եվ-  
րասիական ողջ մայրցամաքում

առավել հայտնի 112 փրկության  
հեռախոսահամարը, որը միջազ-  
գային ճանաչելիությունից բացի  
տեխնիկապես ավելի լայն հնա-  
րավորություններ է ստեղծում  
ահագնգներն օպերատիվ սպա-  
սարկելու համար:  
- Տարին աչքի ընկավ մի քանի  
խոշոր անտառային հրդեհներով:  
Նախարարությունը երբևէ այսքան  
լարված չըջափուլ չէր ունեցել:  
Ինչպե՞ս կգնահատեք փրկարար-  
ների աշխատանքը: Փորձառու հր-  
չեջներից մեկի խոսքով՝ «խստոր-  
վի» հրդեհն առանձնահատուկ էր,  
նա մշեց նաև, որ այդ հրդեհից սո-  
վորելու շատ բան կար: Որպես  
արտակարգ իրավիճակների նա-  
խարար, ի՞նչ եզրակացության  
եկաք Դուք, և ո՞րն էր գլխավոր  
հետևությունը:





**Պատրաստ մոր համագործակցության**

ՀՀ ԱԻ փոխնախարար Էնրիկո Ապրիանովն ընդունել է ՌԳ «Աբսիոն» կորպորացիայի պատվիրակությանը: Կորպորացիան զբաղվում է ժամանակակից բուժսարքավորումների և այլ սպառողական ապրանքների արտադրանքով, որոնք կարող են կիրառվել նաև արտակարգ իրավիճակներում բնակչությանն առաջին օգնություն տրամադրելու գործում: Կողմերը քննարկել են համագործակցության հնարավորությունները:

2 կարող են այլ կերպ ապրել, քանի որ գեներալն ու շարքայինը նույն խրամատում են կռվում, ոչ էլ մենք, քանի որ նույնը մեզ մոտ է, այլ կերպ չենք կարող: Թերթը պետք է էլեկտրոնային լինի, իսկ տպագրված տարբերակը ո՛չ այդ տպաքանակով, միևնույն է, մենք չենք եկամուտ ենք ստանում, բայց նվիրյալներ կան, որ կարող են այդ ամենը տեղափոխել համացանց: Եվ այդպես «911»-ը կարող է այնքան ազդեցիկ դառնալ, որ գովազդ տեղադրի, իսկ մեկ գովազդը թերթի տարեկան բյուջեն կարող է կազմել: Իսկ գովազդ տեղադրելու համար մենք պետք է տեսանելի լինենք, երևանք, ունենանք կայք հաճախողներ: Մենք պետք է կարողանանք դրան հասնել, քանի որ դա այսօրվա պահանջն է: Եվ քննադատություն ունենալ, և սեփական կարծիքը հայտնել որպես գրող-անհատներ: Բայց այդ ամենը պետք է լինի բարձր մակարդակով, այսինքն՝ հասարակությանը սովորեցնենք պրոֆեսիոնալ գրչի, արհեստավարժ, մասնագիտական գիր ունեցող մարդկանց կարծիքն արտահայտել: Անգամ բանավոր խոսքն այսօր այն արժեքը չունի, որքան կայքում կատարած գրառումը: Պետք է ֆեյսբուքյան էջը ակտիվացնել: Մենք աղետների ռիսկերի նվազեցման առումով այսօր հնարավորություն ունենք նաև մատնանշելու համայնքների, տարբեր մարզային կառույցների թերի աշխատանքը կամ բացահայտելու, թե ինչու է այդպես: Եղել է դեպք, վերլուծենք, հասկանանք թերությունները, շտկելու ճանապարհներ գտնենք: Պաշտոնական էջն այդ ամենը չի կարող անել, իսկ թերթում անհատներ են, կարող են, և մենք էլ մասնագիտորեն ձեզ կաջակցենք, որպեսզի ճիշտ մատնանշվեն պատճառները: Մեր ժողովրդի մեծ մասն արտերկրում է ապրում, նաև նրանց պետք է հասանելի լինի, հետաքրքրի կայքը: Նյութեր տեղադրվեն ոչ միայն հայերեն, նաև ռուսերեն, անգլերեն թարգմանված: Այսօր արտակարգ իրավիճակների նախարարության մասին տեղեկությունը ոչ պակաս գրավիչ է, քան ռազմական գործողություններին վերաբերող տեղեկությունը:

Մենք առավելություն ունենք տեղեկատվական դաշտում, և ես չեմ կարծում, թե Մոսկվայում, Փարիզում կամ Նյու Յորքում ապրող հային չի հետաքրքրում հայաստանյան անցուղարձը: Որպեսզի հասանելի լինի, երբ ինչ-որ մեկի ասածի տակ գրառում եք անում, պետք է մեջբերեք մեր «911» թերթի որևէ հոդված, որպեսզի հղում լինի, մարդիկ մտնեն և կարդան: Մտավայություն ունենալու հարկ չկա: Պաշտպանության նախարարությունում ես մեծ փորձ ձեռք բերեցի, իսկ այստեղ հունամիտար ոլորտ է, ապաքաղաքականացված ոլորտ:

Մենք կարող ենք լուրջ խնդիրներ լուծել աղետների ռիսկերի նվազեցման առումով, ահագնագելով, զգուշացնելով: Ունենք և թերթի 911tert.am կայքէջն ավելի աշխույժ է, քան նախարարության պաշտոնականը՝ mes.am-ը, բայց պետք է ավելի ակտիվացնել, որպեսզի հասանելի լինենք աշխարհին: Պետք է մեկ թիմի պես աշխատենք: ■

**«Հիդրոմետի» հզորացումը՝ ընդհանուր հանրային շահ**

Նախարար Դավիթ Տոնոյանի Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցության փորձագիտական պատվիրակության հետ հանդիպմանը աշխատանքային խումբը ներկայացրել է Աղետների ռիսկի կառավարման ազգային ծրագրի շրջանակում ՀՀ ԱԻՆ «Հիդրոմետի» կառավարման և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ մերժողության ծառայության» կարիքների վերաբերյալ կատարված ուսումնասիրություններն ու դրանց հիման վրա ծառայության արդիականացման և բարեփոխման ճանապարհային քարտեզը:

Շնորհակալություն հայտնելով փորձագիտական պատվիրակությանը կատարված աշխատանքի համար՝ նախարար Տոնոյանն ընդգծել է, որ արդիականացման արդյունքում «Հիդրոմետ» ծառայությունը պետք է կարողանա որակյալ ծառայություններ մատուցել հանրությանը:

Համաշխարհային բանկի փորձագիտական խմբի ղեկավար Վլադիմիր Ցիրկունովը շեշտել է, որ «Հիդրոմետի» հզորացումը պետք է դիտարկել որպես ընդհանուր հանրային շահ:

Մասնավորապես՝ ճանապարհային քարտեզով նախատեսվում է տեխնիկական վերազինում, կառավարման համակարգի բարելավում, կադրերի վերապատրաստում: Արդիականացման արդյունքում էականորեն կբարելավվի «Հիդրոմետի» շահառուներին տրամադրվող ծառայությունների որակը:

Ներկայումս Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ անցկացվող ծառայության աշխատակիցների վերապատրաստումը

որակյալ կադրային բազա կստեղծի հետագա բարեփոխումների համար:

Նախատեսվում է 2018-ի գարնանը կազմակերպել միջազգային դոնորների համաժողով՝ «Հիդրոմետ» ծառայության արդիականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ներգրավելու նպատակով: ■



որակյալ կադրային բազա կստեղծի հետագա բարեփոխումների համար: Նախատեսվում է 2018-ի գարնանը կազմակերպել միջազգային դոնորների համաժողով՝ «Հիդրոմետ» ծառայության արդիականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ներգրավելու նպատակով: ■

**Սկսվել են մարզային վերջին վերադաստրաստումները**

Հայաստանում սկսվել է Եվրոպական միության աջակցությամբ այս տարեկալին մեկնարկած քիմիական, կենսաբանական, միջուկային և ճառագայթային (ԶԿՄԾ) զերազանցությունների կենտրոնների 44-րդ ծրագրի եզրափակիչ փուլը: Ծրագիրն իրականացվում է 9 երկրում՝ Հայաստան, Վրաստան, Ուկրաինա, Մոլդովա, Սերբիա, Չեռնոգորիա, Խորվաթիա, Բոսնիա-Յերզովինա: Նպատակն է ձևավորել քիմիական, կենսաբանական, ճառագայթային արձագանքման խմբեր, որոնք աշխատելու են սահմանային անցակետերում:

Փետրվարին, մարտին, մայիսին վերապատրաստման դասընթացներ կազմակերպվեցին Երևանում, Թբիլիսիում, Կիևում, որոնց մասնակցեց 81 մարդ, ամեն երկրից 9 հոգի: Հայաստանի ներկայացուցիչներից 6-ն արտակարգ իրավիճակների նախարարությունից են: Հետո երկրներն անհրաժեշտ զույգ ստացան: Հայաստանը՝ 230 հազար եվրոյի անհատական պաշտպանության միջոցներ, քիմիական, կենսաբանական, ճառագայթային ազդակների հայտնաբերման սարքեր և այլն: Սրան զուգահեռ Եվրոպայում վերապատրաստված մեր մասնագետները վերապատրաստման դասընթացներ անցկացրեցին Շիրակի և Լոռու փրկարարների համար, երկրներն անցկացրեցին ազգային և համատեղ դաշտային ու շտաբային



վարժանքներ: Հայ-վրացական համատեղ վարժանքն անցած շաբաթ էր: Հիմա Եվրոպայում վերապատրաստված մեր մասնագետները վերապատրաստման դասընթացներ են անցկացնում Տավուշի և Սյունիքի փրկարարների համար: Դասընթացները կավարտվեն նոյեմբերի երրորդ տասնօրյակում: Արդյունքների մասին դրանից հետո: Քիմիական, կենսաբանական, միջուկային և ճառագայթային (ԶԿՄԾ) զերազանցությունների կենտրոնների 44-րդ ծրագրով նախատեսված է ոչ միայն արձագանքման ուժերի ստեղծում, այլ նաև կարողությունների զարգացում: Այլ խոսքով՝ ծրագիրը շարունակական է, ու ազգային, համատեղ վարժանքները, վերապատրաստման դասընթացները չեն բացառվում: ■

**Բարերարների նվիրատվությամբ**

Համալրվում է Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության նյութատեխնիկական բազան: Իրականացվում են մի շարք ծրագրեր թե՛ պետությունից և թե՛ բարերարների նվիրատվություններով: Օրերս «Դոմինիկ Սիստեմ» ընկերությունը ծառայությանն է նվիրաբերել անտառային հրդեհների և օջախների հայտնաբերման, փրկարարարորոնողական աշխատանքների համար նախատեսված թռչող սարք՝ դրոն, ինչպես նաև մեծ հզորության երկու համակարգիչ, ավելի քան 2 մլն դրամ արժողությամբ:

Համալրվում է նաև Արցախի փրկարար ծառայության ավտոպարկը: Ուկրաինացի բարերարը Արթուր Ալոյանը ծառայությանն է նվիրաբերել 12 մլն 600 հազար դրամ արժողությամբ 2 «ՈՒԲԶ» մակնիշի վազոն-ավտոբուս: Ավելի քան 6 մլն դրամ արժողությամբ ևս մեկ «ՈՒԲԶ» մակնիշի բեռնաուղևորատար էլ նվիրաբերել է Աշոտ Շահմուրդյանը: Մեքենաների բանալիները Արցախի արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրեն Կարեն Սարգսյանը հանձնել է նյութատեխնիկական ապահովման և պետական ռեզերվների վարչությանը և Շահումյանի ու Շուշիի շրջանների հրշեջ-փրկարարական ստորաբաժանումներին: ■





**Նոր սկիզբ**

Դաշտային խոհանոցի հայ-գերմանական միջազգային մրցույթ անցկացնելու վերջնական որոշումն ղեռ չկա, սակայն հայկական կողմի առաջարկը գերմանական կողմի սրտով է, կողմերի պատրաստակամությունը լավատես լինելու հիմք է:

**ԴԱՇՏԱՅԻՆ ԽՈՒՆՈՑԻ ՄՐՑՈՒՅԹ**

**ՀՀ Արտակարգի առաջարկը հետաքրքրել է գերմանական կողմին**

Արտակարգ իրավիճակների և ճգնաժամային կառավարման ոլորտներում Հայաստան-Գերմանիա համագործակցությունը ակտիվ և արդյունավետ է: 2015-2017 թվականների ընթացքում ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում (ԵԿՊԱ) ՄԱԿ-ի զարգացման ծրագրի և «Աղետների ռիսկի կառավարման ազգային պլատֆորմ» ԱՌՆԱՊ, հիմնադրամի աջակցությամբ կահավորված ու տեխնիկային հագեցված լսարաններում Գերմանական կարմիր խաչի Բադեն Կյուրտենբերգի երկրամասային կազմակերպության (ԳԿԻ ԲԿԵԿ) երկրամասային դպրոցի մասնագետներն իրականացրել են կարողությունների զարգացման 3 դասընթաց ՀՀ ԱԻՆ «911» ծառայության կարգավոր-օպերատորների վերապատրաստման դասընթացներ վարող ԵԿՊԱ դասախոսական կազմի համար: Այժմ արդեն մեր մասնագետները միջազգային չափորոշիչներին համապատասխան մասնատիպ դասընթացները վարում են ինքուուրույն: Կերոնիշյալ դասընթացներում վերապատրաստվել է «911» ծառայության 50 կարգավոր-օպերատոր, որոնցից 30-ի համար 2018 թվականի զարմանը նախատեսված է ևս մեկ դասընթաց «Նոսակցությունների վարում», «Հեռախոսով առաջին օգնության տրամադրում» թեմաներով կատարելագործելու համար հեռախոսով առաջին օգնություն ցուցաբերելու հնարավորությունները:



կա սկսած կամավոր փրկարարական շարժումների կազմավորում-զարգացումից մինչև աղետների մոնիթորինգ և աղետների հոգեբանական ծառայության կազմավորում-զարգացում: Կուլֆգանգ Շմիդտի վերջին այցի ժամանակ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանն առաջարկել է 2018 թվականի դեկտեմբերի 7-ի 1988-ի Սպիտակի երկրաշարժի 30-րդ տարելիցի առիթով կազմակերպել դաշտային խոհանոցի միջազգային մրցույթ: Գերմանական կողմին հետաքրքրել է առաջարկը, Կուլֆգանգ Շմիդտը հարցը կներկայացնի իր ղեկավարությանը:

«Արշավային խոհանոց» էին արտադրում շատ երկրներ Գերմանիան, Ռուսաստանը, Միացյալ Թագավորությունը: Երկրորդ աշխարհամարտի տարիներին «Արշավային խոհանոց» վերանվանվեց «Դաշտային խոհանոց»: Հիմա «Դաշտային խոհանոց» են արտադրում Ռուսաստանը, Միացյալ Թագավորությունը, Լեհաստանը, Ֆինլանդիան, այլ երկրներ: Կան 2-4 կաթսայով դաշտային խոհանոցներ: «Դաշտային խոհանոցի» մրցույթներ են կազմակերպում կամ մրցույթների են մասնակցում Ռուսաստանը, Եգիպտոսը, Իրանը, Իսրայելը, Մոնղոլիան, Սերբիան, այլ երկրներ: Այս տարի Ռուսաստանում անցկացված բանակային խաղերում տանկային բաթլոն, մաքուր երկինք, անվտանգ միջավայր, նորոգող գումարտակ, բարձրակարգ հետախույզներ և այլ խաղաձևերին զուգահեռ անցկացվեց նաև դաշտային խոհանոցի մրցույթ, որին մասնակցում էր 28 երկիր թիմ: 100 տարի առաջվա չափանիշներով, դաշտային խոհանոցի անձնակազմը պետք է 4 ժամում 250 հոգու համար ճաշ պատրաստեր՝ առաջին, երկրորդ, թեյ: Հիմա 3 ժամում 500 հոգու համար՝ առաջին, երկրորդ, թեյ: Դաշտային խոհանոցի մրցույթներում երկրորդական հարցեր չկան, ժյուրին հաշվի է առնում ամեն ինչ կերակուրների համը, պատրաստման արագությունը, խոհանոցի սանիտարահիգիենիկ վիճակը, պարենի մնացորդների հեռացումը և այլն: Ժա-



մանակակց դաշտային խոհանոցի անձնակազմը 10 հոգի է, որից 6-ը՝ սպասարկողներ, 4-ը՝ խոհարար և խոհարարի օգնականներ: Շատ երկրներում կազմակերպվում են «Ճաշ անիվների վրա» և նման անուններով փառատոներ, որոնք ևս դաշտային խոհանոցի մրցույթներ են: Պատերազմում կամ արտակարգ իրավիճակում դաշտային խոհանոցը կենսական անհրաժեշտություն է: Նշված մրցույթների և փառատոների արդյունքում դաշտային խոհանոցը խաղաղ պայմաններում այնքան ընդունելի և սիրելի է, որ, օրինակ, Ուկրաինայում կա «Դաշտային խոհանոց» անունով ռեստորան, որը սիրված վայր է թե տեղացիների, թե զբոսաշրջիկների համար:

Գերմանական կարմիր խաչի գթության խոհանոցի և Հայկական կարմիր խաչի մասնագետները կվերապատրաստվեն և արտակարգ իրավիճակներում դաշտային խոհանոց սպասարկելու հնարություններ կստանան: Ու այսքանից հետո տեղին կլինի մրցույթը՝ նաև հասկանալու համար, թե 1988-ի երկրաշարժից 30 տարի անց որքանով ենք պատրաստ արտակարգ իրավիճակներին: Դավիթ Տոնոյանը գերմանական կողմին ասել է, որ նախարարությունը պատրաստ է մրցույթի համար տարածք տրամադրել, ապահովել պարենի անհրաժեշտ պաշարը:

**Պատմություն և ներկա**

Առաջին դաշտային խոհանոցը ստեղծվել է հենց Գերմանիայում: 1892-ին Fissler ընկերության ճարտարագետ Կարլ Ռուդոլֆը ներկայացրել է «Դաշտային օջախ», որը հնարավորություն էր տալիս տաք ճաշ ունենալ ցանկացած վայրում: Ռուդոլֆի օջախն ուներ երկու կաթսա, ճաշ պատրաստելու համար նախատեսված պարենը պահելու դարակ, սպասք և թերմոսներ: Այս նորամուծությունն այնքան արագ ապացուցեց իր օգտակարությունն ու արդյունավետությունը, որ արդեն առաջին աշխարհամարտում, «Դաշտային օջախի» հայտնագործումից մոտ 16 տարի անց, նույն սարքի տարատեսակները՝ «Արշավային խոհանոց» անուններով կային շատ երկրների բանակներում:

**Հայաստանի առաջարկը**

Դաշտային խոհանոցի միջազգային մրցույթ կազմակերպելու նախարար Դավիթ Տոնոյանի առաջարկը պատահական չէ: Գերմանիայում անցկացվող մրցույթներին երկու անգամ մասնակցել են Հայաստանի պատվիրակներն ու վերադարձել պատվոգրերով: Ի հավելումն Գերմանական կարմիր խաչը Հայաստան է բերել երկու դաշտային խոհանոց, որոնցից մեկը մնալու է Գերմանական կարմիր խաչի Հայաստանի մասնաճյուղում, մյուսը փոխանցվելու է Հայկական կարմիր խաչի ընկերությանը:

Արամ ԶԱՔԱՐՅԱՆ

Սեպտեմբերին շահագործման հանձնվեց Կարդենիս-Մարտակերտ ճանապարհը: Խորհրդային տարիներից գործող մայրուղու 115,3 կմ հատվածը վերակառուցվել էր «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից 2013 և 2014 թվականների հեռուստամարաթոնների ընթացքում հավաքագրված և Հայաստանի ու Արցախի կառավարությունների տրամադրած միջոցներով կատարվել էին հողային աշխատանքներ, կառուցվել ափսաշառպանիչ շերտեր, տեղադրվել ջրթող խողովակներ: Այն երկրորդ միջպետական ճանապարհն է, որն իրար է կապում Հայաստանն ու Արցախը: Հետաքրքրական է, որ միջպետական ճանապարհի կառուցման նախագծային փուլում անտեսվել են անվտանգության որոշ նորմեր. Գետական-Չարեքտար-Նոր Էրեքե-Դաղիվանք-Եղեգնուտ-Չապինի-Քնարավան հատվածներում (ընդհանուր ձգվածությունը՝ 35 կմ) առկա են

**ՔԱՐԱԹՎՓՄԱՆ ԿՏԱՆԳ ԶԿԱ**



վտանգավոր քարաթափման տեղամասեր: Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների ծառայության տնօրեն Կարեն Սարգսյանի խոսքով փրկարար ուժերի կողմից կատարվում է ճանապարհի մշտադիտարկումը վտանգի առկայության դեպքում արագ արձագանքման նպատակով:

Նոյեմբերի 8-12-ը Արցախի արտակարգ իրավիճակների պետական ծառայության փրկարար ուժերի վարչության արագ արձագանքման հատուկ ստորաբաժանման փրկարարները ՀՀ ԱԻՆ ՓԾ փրկարարական ուժերի հատուկ մշանակության փրկարարական աշխատանքների փրկա-



նացման կենտրոնի մարտիկների հետ համատեղ Մարտակերտ-Վարդենիս միջպետական ավտոճանապարհի 15 վտանգավոր տեղամասերում իրականացրել են քարաթափման կանխարգելման աշխատանքներ: Պայթեցման եղանակով կատարվել են մոտ 40 խմ արհեստական քարաթափ-

ման և մաքրման աշխատանքներ: Փրկարարներն իրականացրել են ալպինիստական աշխատանքներ և պարզևատրվել Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության պատվոգրերով:

ԱճԻ ԱՏՏՈՆՅԱՆ





Արջերը զգուշավոր ու խելացի կենդանիներ են, սակայն նրանց դեմ պաշտպանվելու ընդհանրական մեթոդներ չկան: Եվրոպական մի շարք երկրներում որպես պաշտպանիչ միջոց կիրառվում են էլեկտրական հովիվները (էլեկտրական մետաղական ցանկապատերը), սակայն դրանք թանկ արժեն և Հայաստանի առավել տուժող համայնքներում դրանցով ամբողջությամբ պաշտպանություն իրականացնելն առայժմ անիրական է:

«Արջերը քանդում են մեղվափեթակները, մեղրն ուտում, մեղուն մշրում ու հեռանում: Տան լուսամուտից 5 մ հեռավորությամբ դրված փեթակներիցս 4-ը էս տարի արդեն ոչնչացրել են, 200 հազար դրամի վնաս հասցրել: Եղ մեղվաքնտանիքները վերականգնել էլ հնարավոր չէ: Հունիս-հուլիս ամիսներին են գալիս մեղրի հետևից, կարծես զգում են, որ փեթակներում մեղր կա», - պատմում է արջերի ավերածություններից տուժած Վայոց ձորի մարզի Շատին գյուղի բնակիչ Պետիկ Սմբատյանը, որը նկատել է վերջին տարիներին մոտակա անտառներից գյուղի տարածք ազատորեն ներսուղուրս անող արջերի թիվն աճել է: «Նախկինում 1-2 արջ հազիվ լինել, էն էլ իրենց տարածքներից չէին իջնում, բավարարվում էին վայրի հատապտուղներով, հիմա շատացել են, կերն էլ պակասել է, դրա համար գյուղ են գալիս, կարելի է ասել՝ մեր գյուղի մեջ են «ապրում», պատրաստի կերը «վայելում», - ասում է շատինցին:

# ԱՆՎԱԽ ԱՐՋԵՐԸ, ԿԱՍ ԳՅՈՒՂԱՅԻՆ՝ ԱՐՋԱՊԱՆ

**Մուրթաթը սովը հագեցնելու համար բռնել է գյուղի ճամփան**



Յի կարելի դրանց վնասել, բայց զուցե թույլատրեն որսորդական հրացաններով ամեն երեկո կրակոցներ արձակենք, զուցե այդ ծայերից վախենան ու գյուղին մոտ չգան: Խնդիրն իրոք շատ է լքացել, եթե մարդիկ նախկինում անտառ էին գնում բուսատեսակներ կամ վայրի հատապտուղներ հավաքելու և այնտեղ կարող է արջի հանդիպել, այսօր արդեն իրենց սեփական տանն են անպաշտպան: Խնդիրն պետք է լուծում տրվի», - նշեց Մանվել Կարապետյանը:

Գյուղում ոմանք էլ սեփական մեթոդներն են գործի դրել՝ արջերից տնտեսությունները պաշտպանելու համար: Դպրոցի զինղեկ, մեխանիկ-ինժեներ Մելիք Մաթևոսյանը տան մուտքերի համար լույսով աշխատող ազդանշանային համակարգերից է գնել, իր ձեռքով միացումները տվել, դրան զուգահեռ նաև ծայրային ազդանշան ավելացրել համակարգին և տեղադրել տան մուտքի մոտ: Կենդանիների մոտենալուց ոչ միայն լույսը, այլև աղմուկով ծայրային միացումները տվել է պահպանել: «Գիշերվա ցանկացած ժամին զանգի ծայրը լսում են, դուրս են գալիս, կենդանի չկա, բայց հեռացող արջի ոտնաթաթերի թմբկոցը լսվում է: Հեռանում է, բայց հակառակ կողմում իր ավերիչ գործն անում: Ազդանշանային համակարգով տանս մի հատվածն են կարողանում պաշտպանել արջի ավերածություններից, հատվածը բաց է, ամբողջ տարածքը պաշտպանելու համար պետք է ամբողջ երկայնքով այս համակարգից անցկացնել», - ասում է մանկավարժը, բայց մտավախություն ունի, որ արջերը որոշ ժամանակ անց նաև ազդանշանային համակարգի ծայրին էլ կսովորեն: «Լույսը զգում են վրան նայում է ինձ, բայց չի հարձակվում, մի քանի մետր հեռանում է ու կրկին վերադառնում: Արջին հանկարծակի հանդիպելու դեպքում, Աստված գիտի, ինչ կարող է լինել: Խոտը հենց սկսում է գետնից բարձրանալ, արդեն սկսում են գյուղ իջնել, հատկապես թթի, մրգի հասունացման, մեղրի սեզոնին», - պատմում է Մելիք Մաթևոսյանը: Որոշ գյուղացիներ էլ ենթադրում են, որ գիշատիչների թվաքանակի կտրուկ աճը հնարավոր է պայմանավորված լինել «խոտրովի անտառի» իրողեհից արջերի բնակության վայրից հեռանալով:

Արջերը հիմնականում բնակվում են Սյունիքի, Վայոց ձորի, Կոտայքի, Արարատի, Արագածոտնի, Տավուշի, Լոռու մարզերում: Նրանց թվաքանակի փոփոխության վերաբերյալ վիճակագրություն բնապահպանության նախարարությունում չկա: Գերատեսչությունում արջերի հարձակման մասին գրավոր նամակներ շատ են ստանում: Նամակագիրներին խորհուրդ են տալիս հնարավորինս զգույշ լինել արջերից: «Մենք դիմում-նամակներին ի պատասխան արջերից պաշտպանվելու միջոցներ ենք ներկայացնում: Օրինակ բարձր ծայրի, կրակի միջոցով պաշտպանվել կամ ցածր լարման էլեկտրական պատնեշներ անցկացնել, թեև դրանք թանկ հաճույք են: Ինչպես նաև առաջարկում ենք մեղվափեթակները բաց տեղ չդնել, տարածքը ցանկապատել: Ինչ վերաբերում է արջերին այլ վայր տեղափոխելու առաջարկներին. դա հարցի լուծում չէ: Կենդանիներին որտեղ էլ տեղափոխես, եթե սովոր են բնակավայր մտնելուն, ասպայմանով էլ ազատ ելուժուտ կանեն համայնքներ», - փոխանցեց բնապահպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Արմեն Վարդանյանը:

Փրկարարները ոչ միայն Շատինից, այլ Վայոց ձորի մարզի տարբեր համայնքներից են արջերի հարձակման վերաբերյալ բազմաթիվ ահազանգեր ստացել:

Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետի ժամանակավոր տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Հակոբ Սարգսյանը



նի խոսքով 2015-ին մարզի Գողթանի, Թառաթունի, Քարազուխ գյուղերից մեղվափեթակների, պտղատու այգիների վնասման, անասունների վրա արջերի հարձակման վերաբերյալ 16 ահազանգ են ստացել: 2015-ին նաև մարդու վրա հարձակման մեկ դեպք է գրանցվել:

«Գողթանի գյուղում 2015-ին արջն այգի մտնելիս փաթաթվել էր էլեկտրական մետաղական լարերին, Երևանից մասնագետները եկել են քննել ու տեղափոխել: Մենք արջ քննեցնելու հնարավորություն չունենք, պայքարի միջոց, որպես այդպիսին, չկա: 2016-ին Խաչիկ, Թառաթունի, Աղնջածոր, Սարտիրոս, Արտաբույնք, Յորբատեղ գյուղերից 9 ահազանգ է ստացվել: Արջերը հիմնականում ընտանի կենդանիներին են վնաս տվել, մեղվափեթակներ ջարդել, ընտանի կենդանիներ տարել: 2017-ին համայնքներից ահազանգեր դեռ չենք ստացել», - ասաց փ/ծ փոխգնդապետ Հակոբ Սարգսյանը:

Արջերի հարձակման դեպքեր գրանցվում են ոչ միայն Վայոց ձորի մարզի համայնքներում, այլև մյուս մարզերում: Ըստ մասնագետների՝ պետք է հասկանալ արջերի ման վարքագծի պատճառը: «Այսօր Հայաստանում անտառ-հատումները շատ են, ու եթե վերացնում ենք կենդանիների կենսամիջավայրը, բնական է նրանք սնունդ կփնտրեն ամենուր: Խնդիրն այն է, որ այսօր մեր երկրում վայրի կենդանատեսակների պետական հաշվառում չի իրականացվում, ինչը «Կենդանական աշխարհի մասին օրենքի» դրույթ է (հոդվածներ 12 և 13), հետևաբար գիտական տվյալներ չկան խնդրի պատճառը հասկանալու համար, չգիտենք՝ արջերի պոպուլյացիան է ավելացել, կենսամիջավայրը վատթարացել, թե՛ կերն է պակասել... Այդ լիազորությունը ՀՀ բնապահպանության նախարարությանն է», - նշեց էկոլոգ, Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի բնապահպանական ծրագրերի համակարգող, տեխնիկական գիտությունների թեկնածու Արևիկ Սկրտչյանը: Էկոլոգը նաև հիշեցնում է, որ արջերը զգուշավոր ու խելացի կենդանիներ են, սակայն նրանց դեմ պաշտպանվելու ընդհանրական մեթոդներ չկան: Եվրոպական մի շարք երկրներում որպես պաշտպանիչ միջոց կիրառվում են էլեկտրական հովիվները (էլեկտրական մետաղական ցանկապատերը), սակայն դրանք թանկ արժեն և Հայաստանի առավել տուժող համայնքներում դրանցով ամբողջությամբ պաշտպանություն իրականացնելն առայժմ անիրական է: Խնդիրը պետք է լուծում ստանա պետական մակարդակով: Նշենք, որ բնապահպանները Հայաստանի կենդանիների պաշտպանելու համար օրենքի նախագիծ են մշակում:

Սերիկ ՍՈՂՈՍՈՆՅԱՆ

**Խնդիրը** Ի՞նչ անել, եթե հանդիպել եք արջի: Հարցի պատասխանը ըստ փորձագետների, մեր թերթի հաջորդ համարում:



**Անվտանգությունը լեռներում**

ՀՀ ալպինիզմի ֆեդերացիան 7 տարվա իր աշխատանքում միշտ կարևորել է «Անվտանգությունը լեռներում» կարգախոսը: Մշտապես կապի մեջ լինելով ՀՀ ԱԻՆ «911» ծառայության հետ՝ կարևորել է համատեղ աշխատանքը: Ֆեդերացիան լեռներում բազմիցս մասնակցել է փրկարարական աշխատանքների և ոչ միայն: Ֆեդերացիան դիմել է ԱԻՆ-ին, որպեսզի լավագույն լեռնագնացները որակավորվեն ԱԻՆ-ում և ստանան փրկարարի կարգավիճակ:

**ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՄՐՑՈՒՅԹԸ՝ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ**

Այս տարվա հունիսի 28-ին ՀՀ ԱԻ նախարարությունը, Հայկական կարմիր խաչի ընկերությունը և Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակությունը «Հայաստանի Տավուշի մարզում քաղաքացիական պաշտպանության փրկարարական ծառայության կարողությունների զարգացման ոլորտում 2017-2018 թվականների համագործակցության» եռակողմ համաձայնագիր ստորագրեցին, որի նպատակն է սահմանափակ համայնքների բնակչության պաշտպանությունն ու բնակչության պատրաստվածության մակարդակի բարձրացումը: Օգոստոսեպտեմբեր հատվածում անցկացվեցին առաջին օգնության դասընթացներ, իսկ նոյեմբերի 11-ին Տավուշի մարզի Ազատամուտ համայնքի ԱԻՆ քաղաքապետության ստորաբաժանման տարածքում կազմակերպվեց տեսական գիտելիքը գործնական վարժության ձևափոխելու առաջին փորձը՝ առաջին օգնության մրցույթը Տավուշի մարզի սահմաններում 10 համայնքի (Ազատամուտ, Չինարի, Մովսես, Ներքին Կարմիրաղբյուր, Պառավաբար, Կոթի, Սարիգյուղ, Ոսկան, Բերդավան, Այգեպար) քաղաքապետության քիմերի միջև: Մրցույթին մասնակցեց 205 մարդ: «Մրցումը հնարավորություն է իրականացնում մոտ 1000 կիլոմետրում կիրառել և ստուգել դասընթացների ժամանակ ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները»,- վստահ են ԱԻՆ փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչությունում:



2. Լավագույն առաջին օգնող. Տավուշի հատուկ օբյեկտների պահպանության (ՀՕՊ) ջոկատի Այգեպարի ՀՕՊ խմբի անդամ Պարզ Մելիքբեկյան,  
3. Կարմիր խաչի միջազգային կոմիտեի գիտելիքների լավագույն տիրապետող. Ազատամուտի քիմ:  
Հաղթողները պարգևատրվել են պատվոգրերով և նվերներով:  
«Հայաստանի Տավուշի մարզում քաղաքացիական պաշտպանության փրկարարական ծառայության կարողությունների զարգացման ոլորտում 2017-2018 թվականների համագործակցության» համաձայնագրով նախատեսվում են վերապատրաստման դասընթացներ նաև համայնքների մանկապարտեզների և դպրոցների մանկավարժների համար, որպեսզի վերջիններս էլ իրենց հերթին սովորեցնեն երեխաներին անվտանգության վարքականությունը տարատեսակ աղետների և արտակարգ իրավիճակների ժամանակ:

1. Լավագույն քիմի ավագ. Նոյեմբերյանի հատուկ օբյեկտների պահպանության (ՀՕՊ) ջոկատի Բերդավանի ՀՕՊ խմբի անդամ Վասպուր Մեհրաբյան,  
2. Լավագույն քիմի ավագ. Նոյեմբերյանի հատուկ օբյեկտների պահպանության (ՀՕՊ) ջոկատի Բերդավանի ՀՕՊ խմբի անդամ Վասպուր Մեհրաբյան,  
3. Կարմիր խաչի միջազգային կոմիտեի գիտելիքների լավագույն տիրապետող. Ազատամուտի քիմ:  
Հաղթողները պարգևատրվել են պատվոգրերով և նվերներով:  
«Հայաստանի Տավուշի մարզում քաղաքացիական պաշտպանության փրկարարական ծառայության կարողությունների զարգացման ոլորտում 2017-2018 թվականների համագործակցության» համաձայնագրով նախատեսվում են վերապատրաստման դասընթացներ նաև համայնքների մանկապարտեզների և դպրոցների մանկավարժների համար, որպեսզի վերջիններս էլ իրենց հերթին սովորեցնեն երեխաներին անվտանգության վարքականությունը տարատեսակ աղետների և արտակարգ իրավիճակների ժամանակ:

Արամ ԶԱՔԱՐՅԱՆ

**Ռուսերենի դասընթացներ**

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանն ու երևանում գիտության և մշակույթի նուսական կենտրոնի տնօրեն Սերգեյ Ռիբինսկին հոկտեմբերի 28-ին պայմանավորվել էին ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի միջոցով մշակել Հայաստանի փրկարարների ռուսերեն լեզվի իմացության կատարելագործման երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր և վերապատրաստման դասընթացներ կազմակերպել, ինչը հնարավորություն կտա հայ փրկարարներին ռուս մասնագետների օգնությամբ կատարելագործել իրենց հմտությունները և վերապատրաստվել առանց լեզվական խոչընդոտների:

Ռուսերենի դասընթացները կառավարման պետական ակադեմիայում սկսվել է Հայաստանի հրշեջ-փրկարարական ջոկատների հրամանատարների վերապատրաստման առաջին դասընթացը: Մասնակցում է 18 փրկարար:  
Դասընթացը կտևի 3-4 ամիս: Ըստ արդյունքների էլ կորոշվի ծրագրի հետագա շարունակության հարցը:

**Կմասնակցեն բազկամարտի առաջնությանը**

Նոյեմբերի 17-ին՝ Ուսանողների միջազգային օրը, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում կանցկացվի բազկամարտի ուսանողական առաջնություն, որին, ի թիվս այլ բուհերի ուսանողների, կմասնակցի նաև ՀՀ ԱԻՆ ճգնա-

ժամային կառավարման պետական ակադեմիայի մոտ 20 ուսանող: Բազկամարտի ուսանողական առաջնություն առաջին անգամ անցկացվել է 2012 թվականին:  
Հաջողություն ենք մաղթում մեր ուսանողներին:

**Հոկտեմբերի խոշոր հրդեհները**

2017 թվականի հոկտեմբերին ՀՀ ԱԻՆ պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունում հաշվառվել է 182 հրդեհ՝ 67 մլն դրամի նյութական վնասով: Զոհվել է 1, վնասվածք ստացել 4 մարդ:  
**Խոշոր հրդեհներից են՝**  
1. 6 հոկտեմբերի, Արարատի մարզ, գյուղ Վարդաշատ, խոտի դեգ: Նյութական վնասը՝ 4 000 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը պարզաբանվում է:  
2. 9 հոկտեմբերի, Երևանի մարզ, Գ. Նժդեհի փող. 7/15, հասարակական սնունդի օբյեկտ: Նյութական վնասը՝ 8 000 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը էլեկտրահաղորդալարերի կարճ միացում:  
3. 9 հոկտեմբերի, քաղաք Երևան, Աճառյան փողոց, «Ֆոլկսվագեն» մակնիշի ավտոմեքենա: Նյութական վնասը՝ 3 000 000



դրամ: Հրդեհի առաջացման պատճառը վառելիքի արտահոսք:  
4. 10 հոկտեմբերի, Կոտայքի մարզ, գյուղ Գեղաշեն, խոտի դեգ: Նյութական վնասը՝ 8 900 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը պարզաբանվում է:  
5. 18 հոկտեմբերի, Գեղարքունիքի մարզ, գյուղ Գեղահովիտ, փայտանշակման արտադրամաս: Նյութական վնասը՝ 9 910 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը էլեկտրահաղորդալարերի կարճ միացում:  
**Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություն**

Միջպետական ճանապարհներին ճնաքի ժամանակ անվտանգ երթևեկությունն ապահովելու, վարորդներին և ուղևորներին անհետաձգելի օգնություն ցուցաբերելու համար սկսվել է առաջնային օգնության հենակետերի տեղադրման գործընթացը: Վայոց ձորի, Սյունիքի, Գեղարքունիքի, Տավուշի և Լոռու մարզերում կծավալվեն ժամանակավոր փրկարարական հենակետեր:  
Շուրջօրյա հենակետերը կծավալվեն  
• Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքից մինչև «Ջանգեր» կոչվող հատվածում,  
• Սյունիքի մարզի «Ջանգեր» կոչվող հատվածից մինչև Գորիս քաղաք ընկած հատվածում և Շուրմուխ գյուղի հատվածում,  
• Գեղարքունիքի մարզի Վարդենյաց լեռնանցքում, Սոթք-Քարվաճառ ավտոճանապարհին, ճամբարակ-Բերդ ավտոճանապարհին (Գեղարքունիքի մարզի հատվածում),

**ՉՄՈՒՄ ԸՆԴՈՒՎ**

Առաջնային օգնության ձմեռային հենակետեր



• Տավուշի մարզի Բերդ-ճամբարակ ավտոճանապարհին (Տավուշի մարզի հատվածում), Դիլիջանի ոլորաններում, Կիրանց-Ու-



կեպար ավտոճանապարհին,  
• Լոռու մարզի Սպիտակի ոլորաններում:  
Հենակետերի ընտրությունը քննարկվել է մարզային փրկարարական վարչության պետերի հետ, որոշում է կայացվել վրանները ծավալել ձմեռային, մերկասառույցի, արգելափակման առումով ամենավտանգավոր հատվածներում:  
Մեծապատշաճության դեպքում նախարարությունը պատրաստ է նման վրաններ ծավալել նաև մյուս մարզերում:



**Վրուբելի հայտնի կտավը**

Տրետյակովյան պատկերասրահում ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը ԳԳ նախագահ Սերժ Սարգսյանին է հանձնել 1995-ին Գրայստանից գողացված մեծածախ նկարիչ Միխայիլ Վրուբելի «Դևը և հրեշտակը Թամարի հոգու հետ» կտավը, որը Միխայիլ Լերմոնտովի «Դևը» պոեմի նկարազարդումներից է: Նկարը հայտնաբերվել է ՌԴ իրավապահների երկարամյա որոնողական աշխատանքի շնորհիվ:

**Օգնում են փրկարարները**

**Երեք առնետ  
ձեկ բնակարանում**

Անցած յոթ օրում ԳԳ ԱԻՆ փրկարար ծառայության ստորաբաժանումները արտակարգ իրավիճակների վերաբերյալ մոտ 300 ահազանգի են արձագանքել: Շատ դեպքերում փրկարարները դեպքի վայր ձեկնելուն զուգահեռ տեղեկությունը փոխանցել են այլ ծառայության. շտապօգնություն, «Վեոլիա Ջուր», էլ-ցանց, գազի վթարային ծառայություն, կանաչապատման, սանմաքրման ծառայություն, ոստիկանություն և այլն:



Գրանցվել է 30 հրդեհ. այրվել են տան գույք, շինությունների փայտյա կառուցատարրեր, շինանյութ, անասնակեր, բուսածածկ տարածքներ, ջերմահարվել են պողպատե և դեկորատիվ ծառեր: Փակ դուռ բացելու վերաբերյալ էլ 100 կանչ է ստացվել: Վատառողջ, ծանրաբաշ, սակավաշարժ քաղաքացու բնակարանից իջեցնելու, բնակարան բարձրացնելու կամ բնակարանում տեղից տեղ տեղափոխելու կանչեր են սպասարկել երևանի Նոր Նորք, Զանաբեռ-Ջեթյուն, Արաբկիր, Կենտրոն, Աջափնյակ, Շենգավիթ վարչական շրջանների և Լոռու ու Շիրակի փրկարարները: Տարբեր վայրերում արգելափակված (դիտահոր, վերելակի հորան, նկուղ, տանիք, շենքի օդատարածի տարածք, մեքենայի շարժիչի տակ և այլն) մի շարք կենդանիներ են ազատվել: 3 օձ է հայտնաբերվել և տեղափոխվել անվտանգ տարածք: Տարբեր տարածքներում արգելափակված մի շարք մեքենաներ են դուրս բերվել երթևեկի հատված:

Այլ կանչեր. Արաբկիրի փրկարարներն ահա-

**Իմացիր և օգնիր**

**ԱՌԱՔՆ ՕՂՆՈՒԹՅՈՒՆ.**  
**Այրվածքներ.**  
**ջերմային այրվածք**




ձածկելով խիտ գործվածքով (ծածկոց, վերարկու և այլն): Այրվածքներ ստացած տուժածին օգնություն ցուցաբերելիս կարևոր է ապահովել անվտանգությունը, քանի որ այրվածք առաջացնող գործոնը կարող է վնասել ձեզ և շրջապատի մարդկանց: Կատարեք հետևյալ գործողությունները.

- Դադարեցրեք այրվածք առաջացնող գործոնի ազդեցությունը:
- Սառեցրեք այրված մակերեսը:
- Նվազեցրեք վարակի ներթափանցումը:
- Ձեռնարկեք շուկի զարգացումը կամխարգելող քայլեր:
- Ահազանգեք շտապօգնություն, վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները և դրանք փոխանցեք դեպքի վայր արագ արձագանքման ծառայությունների ներկայացուցիչներին: ■

Ջերմային այրվածքներն առաջանում են բարձր ջերմաստիճանի հյուսվածքների վրա տեղային ազդեցությունից (տաք հեղուկներ կամ առարկաներ, տարբեր նյութերի գոլորշիներ կամ բոց): Տաք հեղուկով ներծծված կամ բոցավառվող հագուստը երկարատև է ներգործում այրված մասի վրա: Որոշ սինթետիկ գործվածքներ ջերմությունից հալվում և կաշուն են մաշկին դանդաղեցնելով սառեցումը: Նման այրվածքները, սկզբում լինելով թեթև, որոշ ժամանակ անց կարող են ծանրանալ: Այդ պատճառով առաջին հերթին դադարեցրեք ջերմության ազդեցությունը: Արձակեք և այրվածքի մակերեսից արագ հեռացրեք հագուստը: Մի պոկեք մաշկին կպած հագուստը, որպեսզի մաշկը լրացուցիչ չվնասեք, այլ մկրատով զգուշությամբ կտրեք և հեռացրեք հագուստի ազատ մասերը: Գնարավորինս արագ հեռացրեք մատանիները, ժամացույցը և բոլոր ճնշող իրերը:

Եթե բռնկվում է հագուստը, հետևեք պարզ կանոնին՝ «Կանգնել, ընկնել և գլորվել»: Կանգնեք, դադարեցրեք ցանկացած գործողություն, ընկեք գետնին և գլորվեք, մինչև որ հագուստը դադարի վառվել: Եթե տուժածը խուճապի է մատնվել, ապա դուրս ինքներդ կարող եք հանգցնել կրակը՝ օգելով նրան գետնին և

**ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՌԱՅ**



Շիրակի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ օպերատոր, ծանրամարտի բազմակի մեդալակիր Գրետա Վարդանյանը պատրաստվում է Մեխիկոյում կայանալիք աշխարհի առաջնությանը:



մասնակցել 2020-ին կայանալիք Տոկիոյի օլիմպիական խաղերին: Ուղեգիր ստանալու համար նա պետք է աշխարհի առաջնությունում զբաղեցնի ներառյալ 6-րդ մրցանակային տեղը»,- մանրամասնում է Արտակ Ներսիսյանը:

Ի պատասխան հարցին արդյո՞ք շատ են մրցակիցները, որոնց հետ ծանրամարտուհին պետք է պայքարի մեդալի համար, հավելում է՝ սպորտում ոչինչ կանխատեսելի չէ: Նրանց թվում կան ուժեղ մարզիկներ, որոնք պարբերաբար հաղթանակում են միջազգային մրցումներում: Ցավոք, Գրետան նման միջոցառումների չի մասնակցում հովանավորի բացակայության պատճառով:

Փրկարար-ծանրամարտուհին վերջին օրերին իրեն ամբողջությամբ պարապմունքներին է նվիրել: Դժվար է համատեղել ծանրամարտը, աշխատանքը, տնային հոգսերը. «Պետից մինչև հերթապահ պատասխանատու ըմբռնումով են մոտենում հարցին: Գիտեմ, որ Գրետան մասնակցում է մերկայացնելու, և հաղթանակն ինձ համար առաջնային է»:

Մինչև 55 կգ քաշային կարգի մարզիկները, այդ թվում՝ Գրետա Վարդանյանը, ելույթ կունենան դեկտեմբերի 3-ին: Առցանց հեռարձակմանը կարելի է հետևել [www.paralympic.org](http://www.paralympic.org) կայքում: ■

ԱՍԻ ԱՆՏՈՆՅԱՆ

**Բաժանորդագրություն**

**2018**

**ՄԵՐ ԹԵՐՈՒ**

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻ ՀԱՍԱՐԸ՝**

**ԳԳ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա**

**ՀԿՀԳ 02500731**

**Աճառյան 1, «Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ 1510002970030100**

**Տարեկան բաժանորդագրության գումարը՝ 6720 դրամ:**

Այլ մանրամասների համար զանգահարել՝ (060) 69 10 00 (ներքին՝ 207)

**Շարաքաթերք**

Հրատարակիչ՝ **ԳԳ ԱԻՆ**  
**«ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ**  
Գրանցման վկայական՝  
03U061283, 24.08.2005

Գլխավոր խմբագիր՝  
**Գագիկ ԵՂՅԱՆ**  
Համարի պատասխանատու՝  
**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Նյութերը չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Մեքենաներ անելիս հղումը թերթին պարտադիր է: Տպագրված է ԱՁ «Արման Ամանգուլյան» տպագրատանը. Երևան, Հրաչյա Ներսիսյան, 1, 125  
Ծավալը՝ 2 պայմ. տպ. մասով:  
Ստորագրված է տպագրության 16.11.2017: Տպագրման՝ 3380: Պատվեր՝ 43  
Հասցե՝ Երևան, Աճառյան 1  
Էլ փոստ՝ [artakarg.tert@gmail.com](mailto:artakarg.tert@gmail.com), [info@911tert.am](mailto:info@911tert.am)  
Կայք [www.mes.am](http://www.mes.am), [www.911tert.am](http://www.911tert.am)  
Հեռ.՝ 060 691 000 (502, 503)  
Գինը՝ 140 դրամ:

©  
Գլխագիր՝  
**Արտակ Բաղդասարյանի**  
Գլխագիր և վերնագրային տառատեսակները՝  
**Մկրտիչ Մաթևոսյանի**